

# Մ Ա Ս Ի Ի Ի - Ա

## Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի նախագծում (այսուհետև սույն մասում՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 850.0 մլրդ դրամի չափով կամ 2010 թվականի համար հաստատված<sup>1</sup> 742.8 մլրդ դրամ, սպասողական<sup>2</sup> 771.9 մլրդ դրամ և 2009 թվականին փաստացի ստացված 672.3 մլրդ դրամ համադրելի գումարների համեմատությամբ համապատասխանաբար 14.4%-ով, 10.1%-ով և 26.4%-ով ավելի:

2011 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 91.0% (այդ թվում՝ հարկերը և պետական տուրքերը կազմում են 76.5%), պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար 6.3%-ը և 2.7%-ը:

Ակնկալվում է, որ 2011 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 22.6%՝ 2010 թվականի համադրելի ծրագրային 23.1%-ի, սպասողական 22.2%-ի<sup>3</sup> և 2009 թվականի փաստացի 21.7%-ի դիմաց: ՀՀ 2009-2011թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը բերված է սույն բացատրագրի N 1 աղյուսակում:

<sup>1</sup> Այստեղ և այսուհետև սույն մասում որպես 2010 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները՝ հաշվի առնելով նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ, 11-րդ և 14-րդ մասերով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում կատարված ավելացումները (28.09.10թ դրությամբ դրանք կազմել են 0.7 մլրդ դրամ):

<sup>2</sup> 2009, 2011թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2009 թվականին փաստացի ստացված 17.7 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝

➤ «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով՝ 0.7 մլրդ դրամ եկամուտները (ԱԱՀ-ի գծով՝ 0.4 մլրդ դրամ, պետական տուրքի գծով՝ 0.3 մլրդ դրամ):

➤ ՀՀ պետական կառավարման մարմինների 2009 թվականի արտաբյուջետային միջոցների փաստացի մուտքերը (որոնց գծով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել, սակայն «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն փաստացի ցուցանիշները արտացոլվել են ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում), ընդամենը 16.8 մլրդ դրամ:

➤ «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից, պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառույցների վարձակալությունից, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում թույլ տրված վարչական իրավախախտումների համար Երևանի քաղաքապետի որոշումներով նշանակված տույժերից փաստացի ստացված 0.2 մլրդ դրամը:

<sup>3</sup> Այստեղ և այսուհետև սույն մասում ՀՆԱ-ի նկատմամբ 2010 թվականի համար հաստատված ցուցանիշների հարաբերությունները ՀՀ կառավարության 2010թ բյուջետային ուղերձում նշված համապատասխան ցուցանիշներն

ՀՀ 2011-2013թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (այսուհետև սույն մասում՝ ՄԺԾԾ) 2011 թվականի համար պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 833.8 մլրդ դրամի չափով: Նախագծով ծրագրված բյուջետային մուտքերը ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների համեմատ կրել են հետևյալ փոփոխությունները.

*Աղյուսակ 3.1 ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտների՝ ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող գումարները (մլրդ դրամ)*

Եկամտատեսակը	ՄԺԾԾ-ով հաստատված	Նախագծով առաջարկվող	Տարբերություն (Նախագիծ-ՄԺԾԾ)
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	833.8	850.0	16.2
1. Հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, այդ թվում՝	771.3	773.4	2.1
1.1. Հարկային եկամուտներ և պետական տուրք	650.9	650.0	-0.9
1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	120.4	123.4	3.0
2. Պաշտոնական դրամաշնորհներ	41.2	54.0	12.8
3. Այլ եկամուտներ	21.3	22.6	1.3

2011 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող եկամուտների տարբերությունների հիմնավորումները ներկայացված են ստորև՝ եկամուտների կանխատեսումներին վերաբերվող սույն բացատրագրի առանձին բաժիններում:

### **1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ**

Հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները 2011 թվականի համար Նախագծում ծրագրվել են 773.4 մլրդ դրամի չափով կամ 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականի փաստացի<sup>4</sup> համադրելի մուտքերից համապատասխանաբար 98.1 մլրդ դրամով, 76.2 մլրդ դրամով և 150.3 մլրդ դրամով ավելի:

Էն: ՀՆԱ-ի նկատմամբ 2010 թվականի սպասողական ցուցանիշների հարաբերությունների հաշվարկներում օգտագործվել է 2010 թվականի ՀՆԱ-ի ներկայումս կանխատեսվող մեծությունը:

<sup>4</sup> Առանց ՀՀ 2009-2010թթ պետական բյուջեների՝ սույն մասի 1-ին և 2-րդ տողատակերում նշված այն եկամուտների փաստացի/ծրագրային գումարների, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում:

Հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 2011 թվականի ծրագրային մակարդակը կազմում է ՀՆԱ-ի 20.6%-ը 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականի փաստացի համապատասխանաբար 21.0%-ի, 20.1%-ի և 20.1%-ի դիմաց:

Հարկ է նշել, որ, հիմք ընդունելով տնտեսությունում ընթացիկ տարում արձանագրված և հաջորդ տարում սպասվող դրական տեղաշարժերը, ակնկալվում է արդեն 2011 թվականին էականորեն գերազանցել նշված պարտադիր վճարների գծով նախաճգնաժամային՝ 2008 թվականի հավաքագրման մակարդակը՝ ՀՆԱ-ի նկատմամբ պարտադիր վճարների հարաբերության ցուցանիշի 2008 թվականի համադրելի 20.2%-ի դիմաց 2011 թվականին ծրագրվում է ապահովել 20.6% մակարդակ կամ բացարձակ արժեքով գերազանցել ավելի քան 53 մլրդ դրամով:

### **1.1 ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ**

2011 թվականի համար ծրագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի 650.0 մլրդ դրամ մակարդակը գերազանցում է 2009 թվականի համադրելի փաստացի մակարդակը 129.8 մլրդ դրամով, իսկ 2010 թվականի համադրելի սպասողականը՝ 58.0 մլրդ դրամով: ՀՆԱ-ի նկատմամբ 2011 թվականի համար ծրագրված, 2010 թվականի համադրելի սպասողական և 2009 թվականի համադրելի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարի հարաբերության ցուցանիշները կկազմեն համապատասխանաբար՝ 17.3%, 17.1% և 16.8%:

Համապատասխան փաստացի և ծրագրային համադրելի ցուցանիշների հաշվարկով ՀՄԳ-ն<sup>5</sup> 2011 թվականի համար կկազմի 1.16: Սա նշանակում է, որ 2011 թվականին հարկերի և պետական տուրքերի աճի տեմպը (9.8%) կգերազանցի անվանական ՀՆԱ-ի աճի տեմպին (8.4%), առաջադրելով հարկահավաքման մակարդակն ապահովող լրացուցիչ միջոցառումների իրականացման խնդիր:

2011 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես հիմք են ընդունվել ստորև բերված աղյուսակում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները.

---

<sup>5</sup> ՀՆԱ-ի 1 տոկոս աճին համապատասխանող հարկերի տոկոսային աճը:

Աղյուսակ 3.2 2009-2011թթ փաստացի/կանխատեսումային առանձին մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշներ	2009	2010	2011
	փաստացի	կանխատեսում	
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,102.8	3,470.3	3,763.5
ՀՆԱ-ի իրական աճ	-14.2%	2.7%	4.6%
ՀՆԱ-ի դեֆլյատոր	1.3%	8.9%	3.6%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը ՀՀ դրամով <sup>6</sup>	363.3	374.4	363.74
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	-2,830.1	-3,217.9	-3,414.1
Ապրանքների ներմուծման աճի տեմպը	-25.0%	13.7%	6.1%

Ինչպես և նախորդ տարիներին, 2011 թվականի հարկային եկամուտների գծով 650.0 մլրդ դրամը ծրագրվել է ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի և ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձման գումարների:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2011 թվականի համար ծրագրվել են 614.1 մլրդ դրամի չափով:

Վարչարարական միջոցառումների իրականացումից 2011 թվականին ակնկալվում է հավաքագրել 15.3 մլրդ դրամ:

Ավելացված արժեքի հարկի գերավճարների գումարների վերադարձի գործընթացի կանոնակարգման և դրա նկատմամբ վերահսկողության ուժեղացման նպատակով 2008 թվականից սկսած պետական բյուջեի ծախսերի կազմում նախատեսվում է գումար, որի հաշվին ֆինանսավորվում են պետական բյուջեից վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները: Հարկ է նշել, որ մինչև 2008 թվականը այս գումարները վերադարձվում էին միայն ավելացված արժեքի հարկի գծով ընթացիկ մուտքերի հաշվին: Այս գործոնի ազդեցությամբ 2011 թվականի համար ավելացված արժեքի հարկի գծով ծրագրվել են 20.6 մլրդ դրամի չափով լրացուցիչ մուտքեր: Սա նշանակում է, որ 2011 թվականին ավելացված արժեքի հարկի գծով վերադարձման ենթակա գումարները մինչև 20.6 մլրդ դրամը կվերադարձվեն ծախսերի կազմում նախատեսված գումարի հաշվին, իսկ այս գումարը գերազանցելու

<sup>6</sup> 2011թ ցուցանիշը հաշվարկային է՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի համաձայն այն 2010 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արտարժույթային շուկայում ձևավորված ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքն է: 2010 թվականի համար հաշվի է առնվել նաև ՀՀ շուկայում ձևավորված ԱՄՆ դոլարի փոխարժեքի փաստացի միջին ցուցանիշը տվյալ տարվա հունվար-օգոստոս ամիսների համար:

դեպքում՝ նախկինում գործող կարգով, այն է՝ ավելացված արժեքի հարկից ընթացիկ փաստացի մուտքերի հաշվին: Ընդհանուր առմամբ, հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների՝ պետական բյուջեից վերադարձման մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև նոր գերավճարների և ապառքների առաջացման կանխարգելումը շարունակում է մնալ առաջիկա տարիների հարկային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

Օրենսդրական փոփոխությունների ակնկալվող ազդեցությունը 2011 թվականի հարկային եկամուտների վրա ներկայումս դեռևս գնահատված չէ:

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված՝ 2011 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 614.1 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականներին, որոնք կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի փաստացի և տարեկան սպասողական, 2002-2009 թվականների տարեկան փաստացի մուտքերի, և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2011 թվականի հարկային եկամուտները կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդներով (հաշվարկները կատարվում են այլ հավասար պայմաններում):

#### **1.1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ**

Ավելացված արժեքի հարկի (այսուհետև՝ ԱԱՀ) գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 292.7 մլրդ դրամի չափով, որը 49.2 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը:

Ավելացված արժեքի հարկի գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծի նշված մուտքերը ներառում են հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող գումարները, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների կազմում ընդգրկված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները (4.4 մլրդ դրամ կամ ԱԱՀ-ի ընդհանուր մուտքերի 1.5%-ը): Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Ներքին շրջանառությունից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են մնացորդային եղանակով, որպես սպա-

ռումից և ապրանքների ներմուծումից գանձման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերություն:

Սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան<sup>7</sup>: Դրա համար վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում ստեղծված ավելացված արժեքը ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են նաև մակրոկանխատեսումների համաձայն 2011 թվականի համար ծրագրված գուտ անուղղակի հարկերի գումարի չափով: Հաջորդ նվազեցումը կատարվել է բենզինի, դիզելային և ծխախոտի սպառման հաշվարկային գումարի չափով, քանի որ առաջին երկու ապրանքատեսակների իրացումն ազատված է ԱԱՀ-ից (ներմուծումը հարկվում է հաստատագրված վճարով), իսկ ծխախոտի համար սահմանված է հաստատագրված վճար: Բացի նշված նվազեցումներից, ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

2011 թվականին սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն հաշվարկվել է՝ այդ տարվա գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով 2010 թվականի փաստացի դրույքաչափը<sup>8</sup>:

Ներմուծումից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսելիս դիտարկվել է ապրանքների ներմուծումը: Դրա համար 2011 թվականի ներմուծման ծավալը նվազեցվել է թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի<sup>9</sup>, հանքահումքային մթերքների<sup>10</sup>, ներմուծվող ծխախոտի<sup>11</sup> կանխատեսումային մաքսային արժեքների հանրագումարի չափով: Դրա հետ մեկտեղ ներմուծումից գանձվող ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ապրանքների ներմուծումից գանձվող մաքսատուրքի և ակցիզային հարկի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում: Այս եղանակով գնահատված 2011 թվականի փաստացի բազայի նկատմամբ կիրառելով 2010

<sup>7</sup> Սյունիստոն՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է տվյալ տարվա ՀՆԱ-ի կամ ներմուծման՝ տվյալ հարկատեսակի համար հարկունակ մասը:

<sup>8</sup> Փաստացի կամ սպասողական (հաշվարկային) մուտքերի հարաբերությունը փաստացի բազային:

<sup>9</sup> Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի ապրանքախմբում մեծ տեսակարար կշիռ է կազմում վերամշակման և հետագայում արտահանման նպատակով ադամանդե քարերի ներմուծումը, որը ԱԱՀ-ով չի հարկվում:

<sup>10</sup> Հանքահումքային մթերքների հիմնական մասը ԱԱՀ-ով չի հարկվում:

<sup>11</sup> Հարկվում է հաստատագրված վճարով:

թվականի փաստացի դրույքաչափը, կանխատեսվել է 2011 թվականին ներմուծումից գանձվելիք ԱԱՀ-ն:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2011 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարին ավելացնելով ծխախոտի համար գանձվող հաստատագրված վճարների կազմում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, ստացվում են 2011 թվականի ծրագրային մուտքերը ԱԱՀ-ից:

**1.1.2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ Ծխախոտի արտադրանքի, ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառեւիլիքի համար**

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառեւիլիքի հաստատագրված վճարների գծով 2011 թվականի համար ծրագրվել է 53.8 մլրդ դրամի չափով մուտքեր, որը 6.1 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը:

2011 թվականին ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի միջին ամսական ծավալները՝ նախորդ տարիների և ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի տվյալների հիման վրա: Ծխախոտի արտադրման/իրացման և ներմուծման 2010 թվականի ֆիզիկական ծավալների համապատասխան սպասողական ցուցանիշների նկատմամբ կիրառելով 17 և ավելի տարիք ունեցող բնակչության թվաքանակի՝ վիճակագրական վերջին տվյալների հիման վրա հաշվարկված 2009 թվականի նկատմամբ 2010 թվականին գրանցված (տարեսկզբի դրությամբ) տարեկան աճի տեմպը՝ 0.8%-ը, գնահատվել են 2011 թվականի համապատասխան ցուցանիշները:

ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառեւիլիքի համար հաստատագրված վճարները, ինչպես և նախորդ դեպքում, գնահատվել են ըստ ներմուծման միջին ամսական ծավալների կանխատեսումների, որն իր հերթին կատարվել է որոշակի ենթադրությունների հիման վրա: Առաջին ենթադրությունը վերաբերվում է 2011 թվականին ՀՀ-ում գրանցված, շահագործվող բենզին կամ դիզվառեւիլիք օգտագործող տրանսպորտային միջոցների քանակին: Հաջորդ ենթադրությունը վերաբերվում է 2011 թվականին մեկ մեքենայի վառելիքի միջին օրական ծախսին: Նշված ենթադրությունների քանակական արտահայտության համար հիմք են հանդիսացել 2010 թվականի սպասողական ցուցանիշները:

Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների հաշվարկային գումարները ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

### **1.1.3. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ**

Ակցիզային հարկի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 34.1 մլրդ դրամի չափով, որը 4.8 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը:

2011 թվականի կանխատեսվող գումարի գերակշիռ մասը՝ 60.6%-ը կամ 20.6 մլրդ դրամը կազմում է ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարներում ներառված ակցիզային հարկի հաշվարկային գումարները:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների: Հարկման ընդհանուր ռեժիմով 2011 թվականին գանձվելիք ակցիզային հարկի գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից:

Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ակցիզային հարկի 2011 թվականի տարեկան մուտքերը ներքին շրջանառությունից և ներմուծումից գնահատելիս հաշվի են առնվել 2011 թվականի համար կանխատեսվող սպառման իրական և ապրանքների ներմուծման աճի տեմպերը (3.5% և 6.1%) և ընթացիկ տարվա համապատասխան սպասողական մուտքերը:

### **1.1.4. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ**

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մուտքերը շահութահարկի գծով կանխատեսվել են 2009 թվականի փաստացի մակարդակին մոտ՝ 80.8 մլրդ դրամի չափով:

Շահութահարկի գծով բյուջետային եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության գուտ շահույթ և գուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է հարկվում շահութահարկով, տնտեսության գուտ շահույթը վիճակագրական տվյալների հիման վրա ճշգրտվել (նվազեցվել) է նշված ճյուղերի՝ շահութահարկով չհարկվող գուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Շահութահարկի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են վերը նշված մեթոդով 2010 թվականի համար կանխատեսված հարկման բազայի և փաստացի դրույքաչափի հիման վրա:



#### **1.1.5. Ե Կ Ա Մ Տ Ա Հ Ա Ր Կ**

Եկամտահարկի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 82.1 մլրդ դրամի չափով, որը 21.9 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը: Հաշվարկները կատարված են ըստ եկամտի ստացման հիմնական աղբյուրների:

Աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի կանխատեսումներում, ինչպես և շահութահարկի դեպքում, մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշների և առանձին վիճակագրական տվյալների հիման վրա գնահատվել է հարկման փաստացի բազան: Դրա համար դիտարկվել է ՀՆԱ-ի կառուցվածքը, մասնավորապես՝ ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» հոդվածը: Հետագա հաշվարկներում այս ցուցանիշը նվազեցվել է տնտեսության մեջ զբաղվածների կանխատեսվող թվաքանակին համապատասխան չհարկվող նվազագույն աշխատավարձի և վարձու աշխատողների կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների (աշխատավարձի 3%-ը) հանրագումարի չափով:

Ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներից գանձվող (ձեռնարկատիրական գործունեություն, ավանդներ և այլն) եկամտահարկի հաշվարկները կատարված են փաստացի դրույքաչափի մեթոդի կիրառմամբ և հիմնված են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշների վրա:

Եկամտի նշված երկու աղբյուրներից եկամտահարկի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 2011 թվականի հարկման բազայի և ընթացիկ տարվա փաստացի դրույքաչափի համապատասխան կանխատեսումային մեծությունների հիման վրա:

#### **1.1.6. Մ Ա Ք Ս Ա Տ Ո Ի Ր Ք**

2011 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 31.2 մլրդ դրամի չափով, որը 6.1 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը:

2011 թվականի մաքսատուրքի կանխատեսվող գումարը ներառում է ՀՀ ներմուծվող ծխախոտի համար հաստատագրված վճարում ներառված մաքսատուրքի հաշվարկային գումարը 1.5 մլրդ դրամի չափով:

Այս հարկատեսակի դեպքում ևս հաշվարկները կատարվել են հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների համար առանձին: Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվելիք գումարները կանխատեսվել են մաքսատուրքի փաստացի բազայի գնահատականի հիման վրա, որի առանձին տարրերի հաշվարկման մեթոդը ներկայացված է սույն բացատրագրի՝ ներմուծումից գանձվող ավելացված արժեքի հարկին վերաբերվող համապատասխան բաժնում: Մաքսատուրքի փաստացի բազայի հաշվարկներում ԱԱՀ-ի հաշվարկային բազան լրացուցիչ նվազեցվել է մքսատուրքով չհարկվող՝ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի, մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների, սարքերի և ապարատների ապրանքային խմբերի ներմուծման կանխատեսվող ծավալների չափով:

#### **1.1.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱԽՄԱՆՎԱԾ ԳՈՐԾՈՆՆԵՐՈՅՅԱՆ ԱՌԱՆՃԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄԱՐ**

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2011 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 25.0 մլրդ դրամի չափով, որը 1.2 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը: Այս դեպքում հաշվի է առնվել 2009, 2010թթ օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում գործունեության առանձին տեսակներ տեղափոխվեցին հարկման ընդհանուր համակարգ:

2011 թվականի մուտքերը հաշվարկվել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2011 թվականին առևտրի (4.0%), ծառայությունների (3.9%) ոլորտներում ակնկալվող տնտեսական աճի, ներմուծման աճի (6.1%), ինչպես նաև համապատասխան վճարների գծով մուտքերի՝ նախորդ տարիների հարկային սահունության գործակիցների<sup>12</sup> միջինացված ցուցանիշները:

#### **1.1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ**

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մուտքերը բնապահպանական և բնօգտագործման, ճանապարհային վճարների գծով կանխատեսվել են 13.7 մլրդ դրամի չափով, որը 4.6 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը:

<sup>12</sup> ՀՆԱ-ի տվյալ ճյուղի 1 տոկոս աճին համապատասխանող հարկի տոկոսային աճը:

2011 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով 2005-2010թթ փաստացի/սպասողական մուտքերը, արդյունաբերության ճյուղի 2011 թվականին ակնկալվող տնտեսական աճի՝ 4.6%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 6.1%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

#### **1.1.9. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ<sup>13</sup>**

Այլ հարկային եկամուտների գծով 2011 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 6.7 մլրդ դրամի չափով, որը 1.4 մլրդ դրամով գերազանցում է 2009 թվականի փաստացի մակարդակը:

#### **1.1.10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ**

Պետական տուրքերի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերը Նախագծով ծրագրվել են 20,591.2 մլն դրամի չափով՝ 2010 թվականի համար հաստատված 19,937.6 մլն դրամի<sup>14</sup>, սպասողական 19,627.8 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 18,764.6 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2011 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ 2000-2010 թվականների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2011 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ինչպես նաև ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև

---

<sup>13</sup> Ներառում է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարները, մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները, ուսումնասիրության կամ արդյունահանման լիցենզառուի, ինչպես նաև ուսումնասիրության և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի կողմից վճարվող կոնցեսիոն վճարը, այլ հարկային եկամուտները, պետական բյուջե վճարման ենթակա հողի հարկն ու գույքահարկը, արտոնագրային վճարները:

<sup>14</sup> Առանց ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 2-րդ տողատակում նշված 0.3 մլրդ դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը փորձագիտական եղանակով գնահատվել են 818.4 մլն դրամ, որը համապատասխանաբար 196.7 մլն դրամով և 163.3 մլն դրամով գերազանցում է 2010 թվականի համար հաստատված և 2010 թվականի սպասողական մակարդակները, իսկ 2009 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 51.1 մլն դրամով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են (փորձագիտական եղանակով) 16.3 մլն դրամի չափով, 2010 թվականի համար հաստատված 9.5 մլն դրամի, սպասողական 17.2 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 18.1 մլն դրամի դիմաց:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,892.2 մլն դրամի չափով՝ 2010 թվականի համար հաստատված 1,847.3 մլն դրամի, սպասողական 1,727.9 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 1,713.6 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով կանխատեսումներում, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը<sup>15</sup>, բազային տարիների՝ 2005-2009թթ հավաքագրման միտումներից բացի հաշվի է առնվել նաև այդ տարիներին ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,187.0 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 239.7 մլն դրամով 470.0 մլն դրամով և 496.9 մլն դրամով ավելի է 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 95.0%-ը կամ 2,966.3 մլն դրամը 2011 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին՝

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են 661.7 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2011 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 20.8 %-ը), որը 2010 թվա-

---

<sup>15</sup> ՀՀ տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքերը արտարժույթով գանձելիս հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված նախորդ տարվա՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին տարեկան փոխարժեքը:

կանի հաստատվածից պակաս է 5.6 մլն դրամով, իսկ 2010 թվականի սպասողական և 2009 թվականի փաստացի ցուցանիշներից ավելի է համապատասխանաբար 64.5 մլն դրամով և 47.7 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2011 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով դրա գծով 2002-2010թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումներից:

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,200.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2011 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 37.7%-ը), 2010 թվականի համար հաստատված 1,015,0 մլն դրամի, սպասողական 853.4 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 809.4 մլն դրամի դիմաց:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքի գծով 2011 թվականի ցուցանիշը ծրագրվել է ըստ 2000-2010թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումների:

- լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են 774.1 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2011 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 24.3%-ը), 2010 թվականի հաստատված 747.8 մլն դրամի, սպասողական և 2009 թվականին փաստացի ստացված 761.6 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի նշված տեսակի գծով 2011 թվականի ծրագրային ցուցանիշները կանխատեսվել են համապատասխան տարում տեխնիկական զննություն անցնող մեքենաների թվաքանակի գնահատականի հիման վրա:

- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են 330.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2011 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 10.4%-ը), 2010 թվականի հաստատված 312.0 մլն դրամի, սպասողական 292.0 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 283.0 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի նշված տեսակի գծով 2011 թվականի ցուցանիշը ծրագրվել է ըստ 2003-2010թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումների:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են ընթացիկ տարվա սպասողական մուտքերի չափով՝ 1.0 մլն դրամի

չափով, որն իր հերթին ծրագրվել է՝ հաշվի առնելով 2006-2009թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումները:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 223.0 մլն դրամի չափով, որը 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 37.1 մլն դրամով, 61.1 մլն դրամով և 70.4 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են հաշվի առնելով 2007-2010թթ հավաքագրման միտումները:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,294.4 մլն դրամի չափով՝ 2010 թվականի համար հաստատված 2,600.3 մլն դրամի և սպասողական 2,235.6 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 2,233.9 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով 2001-2010թթ հավաքագրման միտումները:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,698.1 մլն դրամի չափով, որը 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականին փաստացի ստացված մուտքերից պակաս է համապատասխանաբար 48.3 մլն դրամով, 119.7 մլն դրամով և 270.8 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբից 2011 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 3,143.0 մլն դրամը կամ 85.0%-ը, նախատեսվում է ապահովել շահումով խաղերի և վիճակահաղերի, բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, տրանսպորտի, էներգետիկայի, քաղաքաշինության բնագավառներում և սննդամթերքի արտադրության համար տնտեսվարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի գումարների հաշվին: Կանխատեսումներն իրականացվել են, ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված անհրաժեշտ քանակական տվյալներից, 2009 թվականի փաստացի և 2010 թվականի սպասողական մուտքերից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 8,456.1 մլն դրամի չափով, որը 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականի փաստացի ստացված ցուցանիշներից ավելի է համապատասխանաբար 557.8 մլն դրամով, 288.1 մլն դրամով և 1,484.3 մլն դրամով:

Նշված պետական տուրքերից 2011 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 7,848.3 մլն դրամը (92.8 %), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 2 տեսակների հաշվին՝

- ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրք, որի գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 7,048.7 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 83.4%-ը), որը 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականի փաստացի ստացված ցուցանիշներից ավելի է համապատասխանաբար 340.7 մլն դրամով, 200.0 մլն դրամով և 1,192.9 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են հաշվի առնելով 2010 թվականի սպասողական ցուցանիշը՝ 2011 թվականին օդային ուղևորների թվաքանակի 3% աճի ենթադրության հիման վրա, որն իր հերթին կատարվել է «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված Մաստեր Պլանում նախատեսված ուղևորափոխադրումների 2011 թվականի համար կանխատեսված ցուցանիշից ելնելով: 2010 թվականի սպասողական ցուցանիշը ծրագրվել է ըստ պետական տուրքի այս տեսակի գծով 2004-2010թթ հավաքագրման միտումների:

- վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների և օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2011 թվականի մուտքերը կանխատեսվել են 799.6 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2011 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 9.5 %-ը) չափով՝ 2010 թվականի համար հաստատված, սպասողական և 2009 թվականին փաստացի ստացված 643.8 մլն դրամի, 722.0 մլն դրամի և 585.9 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով 2005-2009թթ պետական տուրքի այս տեսակի գծով մուտքերի հավաքագրման միտումները:

## 2. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Նախագծով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 123.4 մլրդ դրամի չափով, 2010 թվականի համար հաստատված 105.2 մլրդ դրամի, սպասողական 105.2 մլրդ դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 102.9 մլրդ դրամի դիմաց:

## 3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2011 թվականին ակնկալվում է ստանալ 54.0 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, ՄԺԾՕ-ով նախատեսված 41.2 մլրդ դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾՕ-ով նախատեսված և Նախագծով առաջարկվող գումարների միջև 12.8 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես դրամաշնորհների կառուցվածքի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾՕ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 401.15 և 541.35 դրամ, Նախագծում՝ 363.74 և 464.39 դրամ): Յուրաքանչյուր դեպքում պաշտոնական դրամաշնորհների նախատեսվող գումարները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա՝ դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները:

Մասնավորապես, 2011 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

- Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրերից՝ 52.0 մլն Եվրո կամ 24.1 մլրդ դրամ,
- ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 57.7 մլն ԱՄՆ դոլար կամ 21.0 մլրդ դրամ,
- ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 7.3 մլն ԱՄՆ դոլար կամ 2.6 մլրդ դրամ,
- Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի շրջանակներում՝ 6.5 մլն ԱՄՆ դոլար կամ 2.4 մլրդ դրամ,
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 4.3 մլն ԱՄՆ դոլար կամ 1.6 մլրդ դրամ,



- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և Դանիայի Թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 1.1 մլն ԱՄՆ դոլար կամ 0.4 մլն դրամ,
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում՝ 0.7 մլն ԱՄՆ դոլար կամ 0.3 մլն դրամ,
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ 4.5 մլն ԱՄՆ դոլար կամ 1.6 մլրդ դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների 2011 թվականի ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N15 աղյուսակում:

#### 4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2011 թվականի համար ծրագրվել են 22.6 մլրդ դրամի չափով՝ 2010 թվականի հաստատված<sup>16</sup> 24.6 մլրդ դրամի և համադրելի սպասողական 32.1 մլրդ դրամի, 2009 թվականին փաստացի ստացված համադրելի<sup>17</sup> 28.0 մլրդ դրամի դիմաց: ՄԺԾԾ-ով այլ եկամուտների գծով 2011 թվականի համար նախատեսվել է 21.3 մլրդ դրամ:

Այլ եկամուտների գծով 2011 թվականի համար ծրագրված տարեկան մուտքերը 2010 թվականի հաստատված ծրագրից պակաս են 2.1 մլրդ դրամով, 2010 թվականի սպասողականից՝ 9.6 մլրդ դրամով, 2009 թվականի փաստացի ցուցանիշից՝ 5.5 մլրդ դրամով, իսկ ՄԺԾԾ-ով հաստատված գումարը գերազանցում է 1.2 մլրդ դրամով:

2011 թվականի ծրագրային ցուցանիշի նվազումը 2010 թվականի հաստատված և սպասողական, 2009 թվականին փաստացի համապատասխան ցուցանիշների նկատմամբ և աճը ՄԺԾԾ-ով հաստատված գումարի նկատմամբ հիմնականում պայմանավորված է երկու եկամտատեսակով, որոնց համապատասխան ցուցանիշները ներկայացվում են աղյուսակ 3.3-ում.

---

<sup>16</sup> Ներառյալ սույն մասի 1-ին տողատակում նշված 0.7 մլրդ դրամի կազմում այլ եկամուտների գծով ավելացված 0.2 մլրդ դրամը:

<sup>17</sup> Առանց սույն մասի 2-րդ տողատակում նշված՝ Երևան քաղաքի մասով 2009 թվականին ստացված 0.2 մլրդ դրամի և ՀՀ պետական կառավարման մարմինների 2009 թվականի արտաբյուջետային միջոցների փաստացի 16.8 մլրդ դրամ մուտքերի կազմում ընդգրկված՝ այլ եկամուտների գծով 14.8 մլրդ դրամի:

Աղյուսակ 3.3. Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով ՀՀ 2009-2011թթ փաստացի/ծրագրային ցուցանիշները (մլրդ դրամներով)

Ցուցանիշը	2009	2010		2011	
	փաստ	ծրագիր	սպաստ-դական	ՄԺԾԾ	նախագիծ
1. Այլ եկամուտներ, այդ թվում՝	28.0	24.6	32.1	21.3	22.6
2. Ընդամենը ստորև	12.6	12.7	18.4	8.2	9
2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներ	10.1	5.9	11.6	3.6	3.9
2.2 Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարներ (տոկոսներ)	2.5	6.8	6.8	4.6	5.1
<i>Տարբերությունը 2011թ նկատմամբ (ըստ տող1-ի)</i>	<i>5.3</i>	<i>2.0</i>	<i>9.6</i>	<i>-1.2</i>	<i>x</i>
<i>Տարբերությունը 2011թ նկատմամբ (ըստ տող2-ի)</i>	<i>3.6</i>	<i>3.7</i>	<i>9.4</i>	<i>-0.8</i>	<i>x</i>

Վերը նշված երկու եկամտատեսակներից առաջինի ձևավորման հիմքում ընկած են պետության կողմից փաստացի տրված վարկերի գումարները, իսկ երկրորդի դեպքում՝ հիմնականում տվյալ տարվա բյուջեի կատարման ընթացքում ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները: Ընդ որում, երկու եկամտատեսակներն էլ կարգավորվում են պայմանագրային հարաբերություններով:

Բացի նշված գործոնից, այլ եկամուտների գծով 2011 թվականի ծրագրային ցուցանիշները 2009, 2010թթ և 2011 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների հետ համեմատելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին եկամտատեսակներ ձևավորվում են արտարժույթային հիմքով, որի արդյունքում արտարժույթի փոխանակային արժեքների փոփոխությունները ևս ազդում են ստացվող համապատասխան գումարների վրա:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2011 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսների փաստացի մուտքերը: Ստորև ներկայացվում են 2011 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2010 թվականի հաստատված և սպաստդական, 2009 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, ինչպես նաև կատարված հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2011 թվականի համար կանխատեսվում են շուրջ 756.8 մլն դրամի չափով, որից՝

1.1 պետական ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների գծով՝ 740.8 մլն դրամ, 2010 թվականի հաստատված 685.9 մլն դրամի, սպասողական 768.6 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 738.6 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2010, 2011 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների և վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

1.2 պետական անտառների և անտառային հողերի օգտագործման և վարձակալության գծով ծրագրվել են մուտքեր 16.0 մլն դրամի չափով՝ 2010 թվականի հաստատված 20.0 մլն դրամի, սպասողական 14.0 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 16.9 մլն դրամի դիմաց:

Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական անտառների և անտառային հողերի վարձակալության վճարների վերաբերյալ գանձապետական փաստացի տվյալները:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2011 թվականին ակնկալվում են 4,250.0 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 3,910.0 մլն դրամ՝ 2010 թվականի հաստատված 5,927.0 մլն դրամի, սպասողական 11,600.0 մլն դրամի և 2009 թվականի փաստացի ստացված 10,115.3 մլն դրամի դիմաց: 2011 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց վճարվելիք տոկոսավճարների:

2.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2011 թվականին ակնկալվում են 340.0 մլն դրամի չափով մուտքեր՝ 2010 թվականի համար ծրագրված 330.0 մլն դրամի, սպասողական 343.8 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 520.1 մլն դրամի դիմաց: Այս եկամտատեսակի գծով 2011 թվականի համար ակնկալվող մուտքերի նվազումը 2009 թվականի փաստացի ցուցանիշի

նկատմամբ հիմնականում պայմանավորված է 2009 թվականին մեկանգամյա բնույթ ունեցող գումարների ստացմամբ:

Շահաբաժինների գծով 2011 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

ա) ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N 1194 որոշմամբ պետական մասնակցության դիմաց պետական բյուջե կատարվելիք շահույթից մասհանումների 20%-ի չափով սահմանումը, մինչև 3 մլն դրամ գուտ շահույթ ապահովված 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ազատումը ՀՀ պետական բյուջե շահաբաժին վճարելուց, ինչպես նաև հաշվետու տարվա գուտ շահույթի և նախորդ տարվա վերջի դրությամբ կուտակված վնասի 3 մլն դրամը գերազանցող դրական տարբերության՝ պետական բյուջե կատարվելիք շահույթի մասհանումը 20%-ի չափով սահմանումը:

բ) մասնավորեցված ընկերությունների կողմից ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ամրագրված շահաբաժինների գծով առկա պարտքերի մարման հնարավորությունը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2011 թվականին կանխատեսվում են 5,052.5 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2011 թվականին ակնկալվում է ստանալ 4,868.2 մլն դրամ, որը ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները, ինչպես նաև նախորդ տարիներին չվճարված տոկոսների՝ 2011 թվականին մարման ենթակա իրատեսական գումարները: Ծրագրային մուտքերի բաշխվածքն ըստ առանձին վարկային ծրագրերի հետևյալն է.

ա) ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև 2009 թվականի հուլիսի 8-ին կնքված ֆինանսական գործակալության պայմանագրի համաձայն ՀՀ կենտրոնական բանկին՝ տնտեսվարող սուբյեկտներին տարեկան LIBOR+4 տոկոսադրույքով վարկ տրամադրելու նպատակով ՌԴ վարկի հաշվին տրամադրվել է 65,500.0 մլն դրամ: Դրա դիմաց ՀՀ 2011 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 3,114.2 մլն դրամ տոկոսավճար:

բ) Համաշխարհային Բանկի օժանդակությամբ իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում (համաձայն 1997 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ կառավարության և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի միջև կնքված N ARSP SL-97/301 պայմանագրի) Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկին առ 01.01.2010թ. տրամադրվել է 650.0 հազ.

ԱՄՆ դոլարի չափով վարկ (տարեկան LIBOR տոկոսադրույքով), որի օգտագործման դիմաց ՀՀ 2011 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 4.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 1.7 մլն դրամ (1 ԱՄՆ դոլար= 363.74 ՀՀ դրամ) տոկոսավճար:

զ) Հյուսիս-արևմտյան շրջանների գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի շրջանակներում (համաձայն 1998 թվականի հունվարի 13-ին ՀՀ կառավարության և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի») Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկին առ 01.01.2010 թվականը տրամադրվել է 1,689.9 հազ. ԱՄՆ դոլարի չափով նպատակային վարկ: Դրա դիմաց տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 90.3 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 32.8 մլն դրամի չափով տոկոսավճար:

դ) Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում (համաձայն 2002 թվականի հունվարի 11-ին ՀՀ կառավարության և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի») առ 01.01.2010 թվականը Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկին տրամադրվել է 2,828.0 հազ. ԱՄՆ դոլար վարկ: Դրա դիմաց առ 01.01.2010թ տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 169.4 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 61.6 մլն դրամի չափով տոկոսավճար:

ե) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքված ենթավարկային պայմանագրերի համաձայն (2004 թվականի փետրվարի 16-ին կնքված N 4(48)/CP-2004, 2005 թվականի փետրվարի 7-ին կնքված N 4(BEC)-2005, 1999 թվականի նոյեմբերի 30-ին և 1999 թվականի հունիսի 25-ին կնքված պայմանագրեր) «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է 28,393.0 հազ. ԱՄՆ դոլարի (տարեկան 0.5% տոկոսադրույքով) և 33,360.5 հազ. Եվրոյի (տարեկան 5%, 0.75% և փոփոխական տոկոսադրույքներով) չափով վարկ: Դրա դիմաց ՀՀ 2011 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 175.1 հազ. ԱՄՆ դոլար և 288.5 հազ. Եվրո կամ շուրջ 197.7 մլն դրամ (1 Եվրո=464.39 ՀՀ դրամ) տոկոսավճար:

զ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի միջև 2005 թվականի մայիսի 12-ին կնքված օժանդակ վարկի համաձայնագրի և 2007 թվականի մայիսի 4-ին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին տրամադրվել է 297.3 հազ. ԱՄՆ դոլարի (տոկոսադրույքը՝ փոփոխական) և 1,521.7 մլն ճապոնական իենի (տարեկան 1.8% տոկոսադրույքով) չափով վարկ, որի օգտագործման դիմաց ՀՀ 2011 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 21.6 հազ. ԱՄՆ դոլար և 14,029.8 հազ. ճապոնական իեն կամ շուրջ 68.5 մլն դրամ (10 իեն=43.20 ՀՀ դրամ) տոկոսավճար:

է) ՀՀ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգի ամրապնդման ծրագիրն իրականացնելու նպատակով, համաձայն 2005 թվականի հուլիսի 28-ին KfW-ի (Կրեդիտանշտալդ Ֆյուր Վիդերաուֆբաու) և ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջև կնքված պայմանագրի, KfW-ն տրամադրել է 3,500.0 հազ. Եվրո գումարի վարկ, որի օգտագործման դիմաց ՀՀ 2011 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 26.3 հազ. Եվրո կամ շուրջ 12.2 մլն դրամ տոկոսավճար:

ը) 2006 թվականի մայիսի 5-ին կնքված N 1/2006 (06.04.2007թ. փոփոխություն) ապրանքային վարկի պայմանագրի շրջանակներում «Վանաձորի բաղնիքային տնտեսություն» ՓԲԸ-ին տրամադրվել է 361.4 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկ, որի դիմաց տարեկան 7.77% տոկոսադրույքով հաշվարկվել է 28.1 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 10.2 մլն դրամի չափով տոկոսավճար:

թ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի միջև 2002 թվականի հունիսի 21-ին կնքված համաձայնագրի համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ին տրամադրվել է 17,895.2 հազ. Եվրո վարկ: Դրա դիմաց տարեկան 0.75% տոկոսադրույքով հաշվարկվել է 128.3 հազ. Եվրոյի կամ շուրջ 59.6 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2004 թվականի հուլիսի 12-ին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է 3,679.3 մլն ճապոնական իեն վարկ: Դրա դիմաց տարեկան 1.8% տոկոսադրույքով հաշվարկվել է 53.4 մլն ճապոնական իենի կամ շուրջ 230.7 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժա) 2004 թվականի փետրվարի 24-ին կնքված N 1(01)/CP-2004 ենթավարկային պայմանագրի շրջանակներում «Հայկական ատոմակայան» ՓԲԸ-ին տրամադրվել է 1,757.1 մլն դրամ վարկ: Դրա դիմաց տարեկան 0.5% տոկոսադրույքով հաշվարկվել է շուրջ 12.0 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժբ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Դարդան» ՍՊԸ-ի միջև 2004 թվականի ապրիլի 16-ին կնքված հաշտության համաձայնագրի համաձայն «Դարդան» ՍՊԸ-ին տրամադրվել է 2,217.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկ, որի դիմաց տարեկան 2% տոկոսադրույքով հաշվարկվել է 40.9 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 14.9 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժգ) ՀՀ ֆինանսների նախարարության և «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում «ՓՄՁ ներդրում-

ներ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը ՌԴ վարկի հաշվին տրամադրվել է 6,400.0 մլն դրամի վարկ, որի դիմաց տարեկան 7% տոկոսադրույքով հաշվարկվել է շուրջ 60.5 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժդ) 2002 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 01 ՎՇ-2002 վարկային պայմանագրի շրջանակներում Ալավերդու քաղաքապետարանին տրամադրվել է 70.0 մլն դրամ վարկ: Դրա դիմաց տարեկան 1% տոկոսադրույքով հաշվարկվել է շուրջ 5.5 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժե) ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 717-Ա որոշմամբ հաստատված տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի օգտագործման դիմաց հաշվարկվել է շուրջ 986.1 մլն դրամի չափով տոկոսավճար:

3.2 ՀՀ ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 506.8 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 184.3 մլն դրամ:

4. Տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 2010 թվականի սպասողական 62.4 մլն դրամի չափով՝ 2010 թվականի հաստատված 34.0 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 44.8 մլն դրամի դիմաց:

5. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2011 թվականի մուտքերը ծրագրվել են 2,514.2 մլն դրամի չափով՝ 2010 թվականի համար ծրագրված 1,968.0 մլն դրամի, սպասողական 2,327.5 մլն դրամի և 2009 թվականին փաստացի ստացված 2,251.1 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով տվյալ մարմնի կողմից կիրառվող պատժամիջոցների գծով 2004-2008 թվականների մուտքերի հավաքագրման միտումները (առանց մեկանգամյա բնույթ ունեցող մուտքերի, ինչպես նաև այս բնագավառում իրականացվող պետական քաղաքականության առանձնահատկությունները (մասնավորապես փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» N 594-Ա որոշումը, համաձայն որի 2009 թվականի հունիսի 1-ից մինչև 2011 թվականի հունվարի 1-ը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ

օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինները, բացառությամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, 2008 թվականի արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն (ներառյալ ավելացված արժեքի հարկը) ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումներ չեն կարող իրականացնել, բացառությամբ վերը նշված որոշմամբ սահմանված դեպքերի):

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2011 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 9,918.0 մլն դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2011 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 3,238.0 մլն դրամի չափով և ռադիոհաճախականության օգտագործման վճարները՝ 4,600.0 մլն դրամի չափով: Վերջինս ծրագրվել է, հաշվի առնելով Նախագծի 7-րդ հավելվածով հաստատված ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափերը 2011 թվականի համար: Հաջորդ խոշոր բաղադրիչներն են «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց վճարը, որը 2011 թվականի համար ծրագրվել է 1 մլն ԱՄՆ դոլար կամ 363.7 մլն դրամ, հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը, որը 2011 թվականի համար ծրագրվել է 250.0 մլն դրամ և «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոնուսը, որի 2011 թվականի ծրագրային ցուցանիշը 107.0 մլն դրամ է: